Ք.Երևան 20.01.2026թ.

«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողով

Խաչիկ Նազարյանի կողմից հնարավոր վարքագծի վերաբերյալ կանոնների խախտման դեպքում կարգապահական վարույթ հարուցելու համար լսումներ հրավիրելու մասին

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովը, մասնակցությամբ հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանի, հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Սարգսյանի, Արմենակ Ադամյանի և Հարություն Գևորգյանի, քննարկելով ,,ՋԻՏԻԷՍ-ԻՄՄՕ,, ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ փաստաբան Արթուր Հովհաննիսյանի /այսուհետ՝ դիմումատու/ Խաչիկ Նազարյանի /այսուհետ կառավարիչ/ մասով, ինչպես ՀՀ արդարադատության նախարարությանը, այնպես էլ «ՍԳԿԿ» ԻԿԿ-ին ներկայացված դիմումը, էական այն եզրակացության, որ «Սնանկության գործով կառավարիչների կոլեգիա» ԻԿԿ-ին և «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.3 հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետի հիմքով, պետք է հարուցվի կարգապահական վարույթ:

Դիմումի քննարկման նպատակով, 24.12.2025թ.-ին նշանակվել է կարգապահական հանձնաժողովի նիստ, որը չի կայացել կողմերի բացակայության պատճառով:

Իր դիմումով դիմումատուն հայտնել է, որ 11.11.2025թ. թվագրված գրությամբ հայտնել էր, որ նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ից մասից բխում է, որ որպես չապահովված պահանջներ ենթակա են բավարարման նաև պարտապանի հիմնադիրների (մասնակիցների, բաժնետերերի, անդամների կամ գործընկերների) պահանջները:Միաժամանակ, հաշվի առնելով, որ «ՋԻՏԻԷՍ-ԻՄՄՕ» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալը կազմված է նրա մասնակիցների ավանդների արժեքից, որը ներդրվել է ՀՀ դրամի տեսքով, իսկ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածի ուժով ստորադաս չապահովված պահանջ է համարվում նաեւ իրավաբանական անձ պարտապանին իր հիմնադիրների մասնակիցների, բաժնետերերի անդամների կամ գործընկերների կողմից տրամադրված ներդրումներից առաջացած պահանջները, հետեւաբար եւ օրենքի ուժով որպես «ՋԻՏԻԷՍ-ԻՄՄՕ» ՍՊԸ-ի պարտատեր են հանդիսանում նաեւ վերջինիս մասնակիցները:

Դիմումատուն միաժամանակ նշել է, որ նկատի ունենալով, որ «ՋԻՏԻԷՍ-ԻՄՄՕ» ՍՊԸ-ին հարկադրված սնանկ ճանաչելու դիմումը ներկայացվել էր Տիգրան Տարիելի Բարսեղյանի կողմից, ով հանդիսանում է ինչպես ընկերության տնօրենը, այնպես էլ 50 տոկոս բաժնեմասի սեփականատեր և նման պայմաններում առկա է շահերի բախում «ՋԻՏԻԷՍ-ԻՄՄՕ» ՍՊԸ-ի եւ Տիգրան Տարիելի Բարսեղյանի միջեւ, ուստի նաեւ «ՋԻՏԻԷՍ-ԻՄՄՕ» ՍՊԸ-ի շահերի արդյունավետ պաշտպանության ապահովման նպատակով եւ ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 5- րդ մասով, 29-րդ հոդվածի 1-ին մասի «ժա.2» եւ «ժա.4» կետերով, 58-րդ հոդվածի 5- րդ մասով, կառավարչից խնդրել էին,

1. տրամադրել տեղեկություններ՝ պարտապանի գործունեության, ֆինանսական վիճակի, ներառյալ՝ գույքագրված ակտիվների եւ պարտավորությունների վերաբերյալ, կցելով ֆինանսական վիճակի վերլուծության եւ գույքագրման ակտերի, ինչպես նաեւ դրանց վերաբերյալ բոլոր փաստաթղթերի պատշաճ վավերացված պատճենները,

2. հայտնել արդյո՞ք կառավարչի կողմից հայտնաբերվել է կեղծ կամ կանխամտածված սնանկության հատկանիշներ, եթե այո, արդյո՞ք կառավարչի կողմից ներկայացվել է հաղորդում իրավասու մարմիններին,

3. տրամադրել պարտապան «ՋԻՏԻԷՍ-ԻՄՄՕ» ՍՊԸ-ի կողմից «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա տրամադրված բոլոր փաստաթղթերի պատշաճ վավերացված պատճենները:

Ի պատասխան նշված դիմումի, ըստ էության, կառավարչի կողմից ներկայացվել է պատասխան, որ ընկերությունում կատարվել են գույքագրման աշխատանքներ: Ընկերությունն աշխատում է իր բնականոն ռեժիմով եւ լուծարման վարույթ չի իրականացվում:

Ընկերության տնօրենի կողմից տեղեկացվել է, որ 10.11.2025 թվականին կայացած ընկերության արտահերթ ընդհանուր ժողովի մասին, որտեղ մասնակից Լ. Սալոյանին եւ վերջինիս ներկայացուցիչ Դ. Հարությունյանին տրամադրվել են անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

Դիմումատուն հայտնել է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի համաձայն՝ դիմումատուի ներկայացուցչի վստահորդները հանդիսանում են օրենքի ուժով պարտատերեր:

Դիմումատուն հայտնել է նաև, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո յուրաքանչյուր պարտատեր կարող է ծանոթանալ սնանկության վարույթի նյութերին, ինչպես նաեւ կառավարչից պահանջելու տեղեկություններ պարտապանի գործունեության, ֆինանսական վիճակի, ներառյալ՝ գույքագրված ակտիվների եւ պարտավորությունների վերաբերյալ:

Ըստ դիմումատուի վերոգրյալից հետեւում է, որ թեւական առումով ի պատասխան մեր հարցմանը կառավարչի կողմից ուղարկվել է պատասխան, սակայն բովանդակային առումով այն չի պարունակում մեր կողմից պահանջված տեղեկությունները, մասնավորապես՝ չեն տրամադրվել եւ չեն հայտնվել՝

1. տեղեկություններ պարտապանի գործունեության, ֆինանսական վիճակի մասին,

2.տեղեկություններ գույքագրված ակտիվների եւ պարտավորությունների մասին.

3. տեղեկություններ ֆինանսական վիճակի վերլուծության եւ գույքագրման ակտերի մասին, ինչպես նաեւ դրանց վերաբերյալ բոլոր փաստաթղթերի պատշաճ վավերացված պատճենները,

4. կառավարչի կողմից հայտնաբերված կեղծ կամ կանխամտածված սնանկության հատկանիշների առկայության կամ բացակայության մասին,

5. կառավարչի կողմից իրավասու մարմիններին ներկայացված հաղորդման առկայության կամ բացակայության մասին,

6.«ՋԻՏԻԷՍ-ԻՄՄՕ» ՍՊԸ-ի կողմից «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 48- րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա տրամադրված բոլոր փաստաթղթերի պատշաճ վավերացված պատճենները:

Ելնելով վերոգրյալից՝ դիմումատուն խնդրել է տրամադրել վերոնշյալ 1-6 կետերում հայցվող տեղեկատվությունը եւ/կամ փաստաթղթերը կամ հայտնել դրանք չտրամադրելու հիմքերը՝ յուրաքանչյուր դեպքում հղում կատարելով համապատասխան նորմին:

Միաժամանակ դիմումատուն հայտնել է, որ նախորդ հարցմանը կից ուղարկել է Սոնա Տիգրանի Էքմեքչյան ամուսնու. ազգանուն Սալոյանի, Լուիզ Գարիկի Սալոյանի, Լեւոն Գարիկի Սալոյանի կողմից փաստաբան Արթուր Հովհաննիսյանին տրված լիազորագրերի բնօրինակները:

Այնուհետեւ դիմումատուի ներկայացուցիչ փաստաբան՝ Արթուր Ստեփանի Հովհաննիսյանի կողմից, «ՍԳԿԿ» ԻԿԿ կարգապահական հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սարգսյանին, կարգապահական հանձնաժողովի kargapah.hanznajox. snank. Ikk @ gmail.com էլ. հասցեին է ուղարկվել դիմում, որով դիմումատուն հայտնել է, որ ի պատասխան

հանձնաժողովի նախագահ՝ Ա.Սարգսյանի՝ Խաչիկ Նազարյանի կողմից, հնարավոր վարքագծի վերաբերյալ կանոնների խախտման դեպքում, հարուցված կարգապահական վարույթի լսումներ հրավիրելու մասին ծանուցման, տեղեկացրել է, որ 28.11.2025 թվականի դիմումով բարձրաձայնված խնդիրը կարգավորվել է եւ այլևս իրեն սպառել է:Սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի կողմից ծանոթանալու համար տրամադրվել է թիվ ՍՆԴ/2480/04/25 գործի վերաբերյալ իր մոտ առկա նյութերը, որի վերաբերյալ 09.12.2025 թվականին կազմվել է համապատասխան արձանագրություն և որով կողմերը արձանագրել են, որ թիվ ՍՆԴ/2480/04/25 գործին ծանոթանալու վերաբերյալ միմյանց հանդեպ պահանջներ եւ բողոք չունեն:

Հանձնաժողովը քննության առարկա դարձնելով վարույթում առկա բոլոր նյութերը էական հետևյալ եզրակացության, որ **չնայած նրան, որ իրականում կարող էին դիմումատուի կողմից դիմումում ներկայացրած հանգամանքները իրոք հանդիսանալ կառավարչի կողմից վարքագծի կանոնի խախտում, սակայն հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դիմումից ըստ էության դիմումատուն հրաժարվել է և հայտնել է, որ վեճը սպառվել է և խնդրել է վարույթը կարճել, իսկ նման պայմաններում կարգապահական հանձնաժողովը չունի ըստ էության դիմում, ուստի նույնպես հայտնեց կարծիք, որ կարգապահական վարույթը ենթակա է կարճման:**

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.4 հոդվածի 1-ին մասի 7-րդ ենթակետը նախատեսում է, որ Կարգապահական վարույթ հարուցող մարմինը չի հարուցում կառավարչին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթ, իսկ հարուցված վարույթը կարճում է, եթե մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում կայացնելը, կառավարիչը վերացրել է կարգապահական վարույթ հարուցելու հիմք հանդիսացած հանգամանքները:

Եթե դիտարկեն վերը նշված նորմի փաստական հանգամանքները, ապա ակնհայտ է դառնում այն հանգամանքը, որ սույն հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման, քանի որ ըստ էության, կառավարչի կողմից լուծվել է դիմումում նշված վեճը և դիմումատուի կողմից այլևս որևիցե մի պահանջ առկա չէ:

Ա.Սարգսյան

Լ.Սարգսյան

Հ.Գևորգյան

Ա.Ադամյան